



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“18” 02 2019թ.

N.....

Հ Ր Ա Մ Ա Ն N- 34 - Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի ԹԻՎ 20-Ա ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի
ԹԻՎ 45-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, վարչապետի 2019 թվականի փետրվարի 13 N 124-Լ որոշմամբ և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 727-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2016 թվականի ապրիլի 12-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարին կից գործող հասարակական խորհուրդ ստեղծելու և խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին» N 20-Ա հրամանը.

2) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2016 թվականի մայիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարին կից հասարակական խորհրդի կազմը հաստատելու մասին» N 45-Ա հրամանը:

18.02.2019

X 

VERIFIED OCSP 18.02.2019 17:54:26 GMT+4

Signed by: PAPIKYAN SUREN 3604860490

Ս. Պապիկյան